ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8. 1961 Общественные науки

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

(«Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի պրոսպեկտի քննարկումը).

Սովետահայ պատմագրությունը հետպատերազմյան շրջանում զգալի հաջողություններ է ունեցել թե՛ փաստական նյութի կուտակման և թե՛ առանձին պրոբլեմների մշակման ուղղությամբ։ Վերջին տասնամյակներում Սովետական Հայաստանի տերիտորիայում ինտենսիվ կերպով կատարվող հնագիտական աշխատանքները հարուստ նյութ տվեցին և մեծ չափով նպաստեցին Հին և Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և նյութական մշակույթի պատմության բարձրանալն ու լուսաբանմանը։

Միաժամանակ բեղմնավոր աշխատանք է կատարվել պատմիչների և այլ գրավոր աղբյուրների ու արժեքավոր փաստաթղթերի հրատարակման ուղղությամբ։

Լուրջ մենագրական ուսումնասիրության են ենթարկվել հայ ժողովրդի բազմադարյան պատմության առավել կարևոր հարցերը, որոնց մի մասը ստացել է կրիտական խոր հիմնավորում և ճանաչում գտել սովետական պատմագրության կողմից։

Սովետահայ պատմագրության ուշադրության կենտրոնում է եղել Հայաստանի սովետական շրջանի պատմության մշակումը։

Հետպատերազմյան շրջանում պատմագրության ձեռք բերած նվաճումները հասարավորություններ ընձեռեցին 1950-ական թվականի սկզբներին ձեռնամուխ լինելու և ստեղծելու հայ ժողովրդի ամբողջական պատմության ուսումնական ձեռնարկը՝ միջնակարգ դպրոցի ծրագրի սահմաններում։

«Հայ ժողովրդի պատմությունն» դասագրքի ստեղծումը, անշուշտ, սովետահայ պատմագրության լուրջ նվաճումն էր։ Սակայն այն չէր կարող բավարարել լայն հասարակայնության, մանավանդ գիտական հասարակայնության ու ուսանողության պահանջները։ Վաղուց ի վեր անհրաժեշտություն էր դարձել ստեղծելու հայ ժողովրդի պատմությունը դիտական-քննական խոր ու բազմակողմանի լուսաբանմամբ։

Հասկանալի է ինքնին, որ հայոց պատմության լուսաբանման հիմքը կազմում են մարքս-լենինյան պատմագրության դրույթները։ Հենց այդ դիրքերից է, որ պետք է ուսումնասիրվեն հայ անցյալի զարգացման պատմական էտապները, պետք է արժեքավորվի նրա տնտեսական, հասարակական ու կուլտուրական առաջընթացը։

Հաշվի առնելով այս ամենը, սովետահայ պատմագրության վերոհիշյալ նվաճումների հիման վրա՝ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը ձեռնամուխ եղավ այդ դժվարին ու շնորհակալ աշխատանքին։ Դրա առաջին քայլը հանդիսացավ հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի վերաբերյալ ինստիտուտի կողմից վերջերս հրատարակված պրոսպեկտը։

Հայ ժողովրդի գիտական պատմությունը նախատեսված է ստեղծել յոթ հատորով։ Պատմության պրոսպեկտը պլանավորվել և իրականացվել է Ռեսպուբլիկայի լավագույն մասնագետների համատեղ ուժերով։

Պրոսպեկտի համաձայն հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի առաջին հատորը ընդգրկելու է հին Հայաստանի նախնադարյան համայնական հասարակության և ստրկատիրական հասարակարգի պատմությունը։ Երկրորդ և երրորդ հատորները՝ հայ ժողովրդի զարգացման ֆեոդալիզմի ժամանակաշրջանի պատմությունը։ Հայաստանի կապիտալիզմի էպոխայի պատմությունը արտացոլվելու է չորրորդ, հինգերորդ հատորներում, իսկ վերջին երկու հատորներում տրվելու է Սովետական Հայաստանի բառասնամյա պատմությունը։ Յուրաքանչյուր հատորը նախատեսված է հրատարակել 45—50 տպագրական մամուլի սահմաններում։

Ս/թ հունիսի 27—28-ին տեղի ունեցավ պրոսպեկտի հրապարակային քննարկումը, որին մասնակցեցին Ռեսպուբլիկայի պատմաբանները, տնտեսագետները, փիլիսոփաները, գրականագետները։ Քննարկման մասնակիցները բարձր գնահատելով Պատմության ինստիտուտի ձեռնարկումը՝ մեր ժողովրդի գիտական բազմահատոր պատմության պրոսպեկտի ստեղծման գործում, միաժամանակ քննադատական դիտողություններ արեցին նրա վերաբերյալ։

Լուրջ առարկությունների հանդիպեց բազմահատորյակի հիմքում դրված պերիոդիզացիայի հարցը։ Մի շարք ընկերներ՝ պրոֆ. Ս. Զուբարյանը (ՀՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտ), պրոֆ. պրոֆ. Ս. Պողոսյանը, Հ. Գաբրիելյանը (Պետական համալսարան) և ուրիշներ իրավացիորեն նշեցին մի շարք սխալներ ու վիճելի դրույթներ՝ պերիոդիզացիայի հարցում։ Դա նկատելի է պրոսպեկտի այն հատվածներում, ուր շարադրված են ֆեոդալական հասարակության ժամանակաշրջանն ընդգրկող երկրորդ և երրորդ, ինչպես նաև՝ կապիտալիստական հասարակարգի պատմության դարաշրջանն ընդգրկող չորրորդ և հինգերորդ հատորների կոնսպեկտները։

Հանդամանալից քննարկվեցին հատկապես ազգային ազատագրական շարժումների և հասարակական հոսանքների բնութագրման և գնահատման հարցերը։ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը, պատմ. գիտությունների թեկնածուներ Հ. Վարդանյանը (ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ), Վ. Մելիքսեթյանը, Վ. Քալաշյանը (ՀՍՍՌ ԳԱ Պատմության թանգարան), Գ. Զուբարը (Պետական համալսարան) և այլ ընկերներ ընդգծեցին այդ խնդրի գիտական-քաղաքական ակտուալ նշանակությունը և նշեցին, որ մեր պատմագրությունը անբավարար է մշակել այդ հարցը։ Առանձնապես վատ են բացահայտվում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման սոցիալ-տնտեսական պատճառները ու պայմանները։ Չեն տարբերակվում ազգային-ազատագրական շարժման երկու օջախները՝ Արևմտյան Հայաստանում և Արևելյան Հայաստանում։ Պրոսպեկտում անբավարար է տրված ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը։ Գրեթե չեն տրվում հայ իրականության մեջ եղած հոսանքների և քաղաքական պարտիաների առաջացման սոցիալ-տնտեսական պայմանները և այդ պարտիաների էվոլյուցիան։

Մի շարք ընկերներ իրենց կարծիքները նվիրեցին պրոսպեկտի Սովետական Հայաստանի պատմությունը ընդգրկող բաժնին։ Պրոֆ. Հ. Թումանյանը (Պետական համալսարան) ընդգծեց, որ պրոսպեկտում չեն արտացոլվել այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո պայքարը տարբեր կացութաձևերի միջև և սոցիալիզմի տնտեսական հաղթանակը՝ կապիտալիզմի նկատմամբ, ինչպես նաև Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորման հարցը։

Քննարկման մասնակիցների ուշադրությունը գրավեց նաև հայ գաղթավայրերի պատմության անբավարար արտացոլումը պրոսպեկտում։ Պատ. գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը (ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ), բանասիրական գիտությունների թեկնածու Աս. Մնացականյանը (Պետական Մատենադարան), պատ. գիտությունների թեկնածու Դ. Վարդումյանը (Հնագիտության և ազգագրության ինստիտուտ) նշելով հանդերձ, որ գաղութահայության պատմության գծով մեր պատմագրությունը այժմ կատարում է իր առաջին քայլերը, ցանկություն հայտնեցին՝ այդ հարցերը հնարավորին չափով ներկայացված տեսնել բազմահատորյակում։ Միաժամանակ շեշտվեց, որ անհրաժեշտ է սփյուռքահայության ժամանակակից պատմության հարցերը նույնպես ընդգրկել պրոսպեկտում։

Տնտեսագիտական գիտ. թեկնածու Ա. Եղիազարյանը (ՀՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտ) իր ելույթում կանգ առավ դաշնակցական պարտիայի հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնելու անհրաժեշտության վրա։ Նա կարևոր համարեց, որ հակահարված տրվի դաշնակցական պատմագրության հերյուրանքներին։

Ա. Եղիազարյանը միաժամանակ անհրաժեշտ համարեց բազմահատորյակում անդրադառնալու հայ բուրժուական ազգի կազմավորման հարցին՝ կանգ առնելով նրա սոցիալ-դասակարգային կազմի վրա։ Պրոֆ. Վ. Ջալոյանը (ՀՍՍՌ ԳԱ Փիլիսոփայության սեկտոր), բանասիրական գիտ. թեկնածու Գ. Ստեփանյանը (ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան), բժշկ. գիտ. թեկնածու Ա. Կծոյանը (Բժշկական ինստիտուտ) և ուրիշներ նշեցին, որ պրոսպեկտում միանգամայն թռուցիկ և թերի են ներկայացված հայ ժողովրդի մշակույթի՝ գրականության, արվեստի և գիտության այլ և այլ բնագավառները։

Քննարկման մասնակիցների ելույթներում հատուկ շեշտվեց տեղական և ընդհանուր նյութի համաչափությունը պահպանելու անհրաժեշտությունը։ Պրոսպեկտի առանձին բաժիններում այդ համաչափությունը երբեմն այնքան խախտվում է, որ տեղական նյութը կորչում է ընդհանուրի մեջ։ Նման մոտեցումը հնարավորություն չի ընձեռնի՝ հայ ժողովրդի պատմության կարևոր պրոբլեմները պատշաճ խորությամբ ու ամբողջական ձևով ներկայացնելուն, տեղական առանձնահատկություններն ու օրինաչափությունները վեր հանելուն։

Ցանկություն հայտնվեց բազմահատորյակում, ըստ հատորների կամ առանձին պատմական էպոխաների, տալու պատմագրության և աղբյուրների տեսություն։ Դա անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ, ինչպես ճիշտ նշեց բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Նալբանդյանը (Պետական համալսարան), բազմահատորյակում մեր ժողովրդի բազմադարյան պատմությունը ներկայացվելու է ոչ թե էմպիրիկ շարադրանքի ձևով, այլ տրվելու է նրա քննական պատմությունը՝ մարքսիստական պատմագիտության հայեցակետով։ Վ. Նալբանդյանն ընդգծեց, որ բազմահատորյակում ոչ միայն պետք է քննարկվեն ու վերագնահատվեն պատմական դեպքերն ու դեմքերը, այլ նաև այդ դեպքերի ու դեմքերի նկատմամբ ցարդ հայտնված կարծիքներն ու մերձեցումները։ Միայն այդ եղանակով ստեղծված բազմահատոր պատմությունը կծառայի իր նպատակին։ Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշ. Հարությունյանը կանգ առավ Հայրենական Մեծ պատերազմին հայ ժողո-

լրջի մասնակցության հարցերի լուսաբանելու վրա և իր դիտողություններն արեց «Պրոսպեկտի» շուրջը։

Քննարկման ընթացքում շոշափվեցին նաև բազմաթիվ այլ հարցեր, որոնք անշուշտ հաշվի կառնվեն թե՛ «Պրոսպեկտի» վերամշակման և թե՛ բուն բազմատատորյակի շարադրման ընթացքում։

Պրոսպեկտի խմբագրական կոլեգիայի կողմից ելույթ ունեցան պրոֆ. պրոֆ. Ա. Հակոբյանը, Բ. Առաքելյանը և պատմ. գիտ. թեկնածու Վ. Ոսկանյանը։ Քննարկման վերջում ընդարձակ ելույթով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Ռ. Հովհաննիսյանը։

Պատմության ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Ա. Բ. Հարությունյանը իր եզրափակիչ խոսքում նշեց, որ քննարկումն անցավ գործարար ստեղծագործական մթնոլորտում և ունեցավ իր դրական նշանակությունը։ Միաժամանակ ընդգծեց, որ քննարկման ընթացքում որոշակիորեն պարզ դարձավ, թե որքան հասունացած է հայ ժողովրդի պատմության առանձին պրոբլեմների շուրջ դիսկուսիաներ, հրապարակային քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտությունը։